

«ՎԱՎԵՐԱՅՆՈՒՄ ԵՄ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ
21 դեկտեմբերի 1998 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 դեկտեմբերի 1998 թվականի N 812
քաղ. Երևան

**ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ
ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ, 10-րդ 17-րդ, 23-րդ և 26-րդ հոդվածներին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ օբյեկտների ցանկը՝ համաձայն N 2 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության տարածքում կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների ցանկը՝ համաձայն N 3 հավելվածի:

(**Որոշումը խմբ. 29.12.05 N 2406-Ն**)

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 21-ի N 812 որոշման
(փոփ. 29.12.05 N 2406-Ն)

Կ Ա Ր Գ

**ԲՆԱԿԵԼԻ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ, ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ, ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ
ՓՈՓՈԽՄԱՆ**

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ՝ շինարարության թույլտվություն պահանջող բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և

փոփոխման (այդ թվում՝ քաղաքաշինական էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) կիրառմամբ) ընթացակարգերին ներկայացվող հիմնական պահանջները:

(1-ին կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, լրաց. 07.06.12 N 736-Ն)

1.1. Քաղաքաշինական էլեկտրոնային համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային համակարգ) միջոցով սույն կարգի 1-ին կետով սահմանված գործընթացներն իրականացվում են կառուցապատողի հայեցողությամբ:

(1.1 կետը լրաց. 07.06.12 N 736-Ն)

2. Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների կառուցման, վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման, գործառական նշանակության փոփոխման, ինչպես նաև բարեկարգման (ներառյալ՝ քանդման) նախագծերը ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթեր են (այսուհետ՝ նախագծային փաստաթղթեր), որոնց մշակման պատվիրատու են հանդիսանում օրենքով սահմանված կառուցապատողի իրավագործություններով օժտված քաղաքաշինական գործունեության սուբյեկտները (այսուհետ՝ պատվիրատու):

(2-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

3. Պատվիրատուն համապատասխան լիցենզիա ունեցող՝ նախագծային աշխատանքներ իրականացնող կապալառուի հետ (այսուհետ՝ նախագծող) կնքում է պայմանագիր և նրան հանձնում՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1473-Ն որոշմամբ սահմանված կարգով տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը, այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող՝ օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմանները,

բ) պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքը (ձև NN 1 և 2),

գ) վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող և արդիականացվող օբյեկտների դեպքում նաև՝ դրանց տեխնիկական վիճակի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 346 որոշմամբ սահմանված կարգով կազմված եզրակացությունը,

դ) ինժեներաերկրաբանական հետազննման նյութերը,

ե) **(ենթակետն ուժը կորցրել է 03.03.11 N 257-Ն)**

Նախագծողը կարող է պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն հավաքել սույն կետի «գ» և «դ» ենթակետերում նշված և սույն կարգի 10-րդ կետով սահմանված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութերը կամ դրանց մի մասը:

(3-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, լրաց. 29.12.05 N 2406-Ն, լրաց., փոփ., խմբ. 03.03.11 N 257-Ն)

4. Պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների նախագծման դեպքում պատվիրատուն նախագծողին ընտրում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(4-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

5. Պետական կամ համայնքի բյուջեի (այդ թվում՝ վարկային և դրամաշնորհային) միջոցների հաշվին, ինչպես նաև դրանց ներգրավմամբ իրականացվող օբյեկտների նախագծման դեպքում պարտադիր կազմվում են օբյեկտի նախահաշվային փաստաթղթերը: Մնացած դեպքերում նախահաշվային փաստաթղթերը մշակվում են պատվիրատուի որոշմամբ:

(5-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

6. Նախագծային փաստաթղթերը, կախված նախագծվող օբյեկտի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից), կարող են մշակվել մեկ՝ «Աշխատանքային նախագիծ» կամ երկու՝ «Նախագիծ» և «Աշխատանքային փաստաթղթեր» փուլերով:

(6-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, փոփ. 03.03.11 N 257-Ն)

6.1. Որպես կանոն, մեկ փուլով մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների, իսկ երկու փուլով՝ IV և V կատեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերում և պայմաններով:

(6.1 կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

6.2. Պատվիրատուի և ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրող իրավասու մարմնի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն կարգի 6.1-ին կետով նախատեսված նախագծային փաստաթղթերի մշակման փուլայնությունը կարող է փոփոխվել՝ ելնելով նախագծային և շինարարական աշխատանքների կազմակերպման նպատակահարմարությունից:

(6.2 կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

7. Նախագծային փաստաթղթերի 2 փուլով մշակման դեպքում հաստատվող փուլ է համարվում «Նախագիծ» փուլը, որի հիման վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է տրվել շինարարության թույլտվություն, որում համապատասխան նշում է կատարվում աշխատանքների իրականացման հաջորդականության վերաբերյալ (նախապատրաստական, հողային, շինմոնտաժային աշխատանքներ և այլն): «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը մշակվում է հաստատված նախագծի հիման վրա և դրանով ընդունված լուծումներին համապատասխան:

(7-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, լրաց. 29.12.05 N 2406-Ն)

8. Նախագծային փաստաթղթերի մշակման փուլերը սահմանվում են ճարտարապետահատակագծային առաջադրանքով և նախագծային կապալի պայմանագրով: Նախագծային լուծումները պետք է ապահովեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջները:

(8-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, լրաց. 29.12.05 N 2406-Ն)

9. Նախագծային փաստաթղթերի մշակման ճարտարապետահատակագծային առաջադրանքով կամ նախագծային կապալի պայմանագրով կարող է նախատեսվել սույն կարգի 6-րդ կետով նախատեսված նախագծային փաստաթղթերի մշակման միջանկյալ համաձայնեցման՝ «Էսքիզային նախագիծ» փուլի մշակման պայման, օբյեկտի ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումների՝ պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախնական համաձայնեցման համար:

(9-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

10. Նախագծային փաստաթղթերի կազմին և բովանդակությանը ներկայացվող հիմնական պահանջները սահմանվում են քաղաքաշինության բնագավառի պետական լիազորված մարմնի գերատեսչական ակտով: Նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով ամրագրված պայմաններին համապատասխան՝ նախագծային փաստաթղթերի կազմում կարող են մշակվել լրացուցիչ նյութեր, որոնց բովանդակությունը և մասշտաբը նշվում են պատվիրատուի կողմից կազմված նախագծային առաջադրանքում, ընդ որում, վերջինս չի կարող հակասել ճարտարապետահատակագծային առաջադրանքով սահմանված պայմաններին:

(10-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, փոփ. 29.12.05 N 2406-Ն)

11. Պատվիրատուն նախագծային աշխատանքների ավարտից հետո նախագծային փաստաթղթերը ներկայացնում է համապատասխան լիցենզիա ունեցող անձին՝

փորձաքննության: Նախագծային փաստաթղթերը նախագծողի կողմից կարող են ներկայացվել փորձաքննության, եթե այդպիսի պայման նախատեսված է նախագծային աշխատանքների կապալի պայմանագրով: Փորձաքննությունն իրականացվում է պատվիրատուի (կամ, պայմանագրով նախատեսված դեպքերում՝ նախագծողի) և փորձաքննություն իրականացնողի միջև կնքվող պայմանագրի համաձայն:

(11-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

12. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմանը համապատասխան, ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար փորձաքննությունը կարող է փոխարինվել նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին նախագծային փաստաթղթերի համապատասխանության վերաբերյալ երաշխավորագրով:

Նախագծային փաստաթղթերի համալիր փորձաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև համապատասխան փորձագիտական կամ մասնագիտական եզրակացություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմինների մասնակցությամբ՝ սույն կետում նշված որոշմամբ սահմանված կարգով:

(12-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, փոփ. 29.12.05 N 2406-Ն, 03.03.11 N 257-Ն, խմբ. 06.10.11 N 1541-Ն)

12.1. Պատվիրատուն փորձաքննության դրական եզրակացությունը (կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում՝ նախագծային աշխատանքների կապալառուի գրավոր երաշխավորագիրը) և օբյեկտի նախագծային փաստաթղթերը՝ դրանց համաձայնեցման և միաժամանակ շինարարության թույլտվության ստացման մասին դիմումով (Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման N 1 ձև) ներկայացնում է համայնքի ղեկավարին, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այլ բան սահմանված չէ:

(12.1 կետը լրաց. 07.06.12 N 736-Ն)

12.2. Սույն կարգի 12.1-ին կետում նշված գործառույթն էլեկտրոնային համակարգի կիրառմամբ իրականացնելու դեպքում՝ պատվիրատուն գրանցվում է իրավասու մարմնի «Էլեկտրոնային ընդունարանի» վեբ կայքում ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման փուլում ստացված գրանցման համարով կամ, դրա բացակայության դեպքում, ստանում նոր գրանցման համար ու ներկայացնում սույն կարգի 12.1-ին կետում նշված էլեկտրոնային ձևաթղթով լրացված դիմում՝ դրան կցելով անհրաժեշտ փաստաթղթերի տեսաներածված օրինակները: Գրանցման համարը պատվիրատուի համար դիմումի շարժի մասին տեղեկություններ ստանալու միջոց է:

(12.2 կետը լրաց. 07.06.12 N 736-Ն)

13. Պատվիրատուի կողմից ներկայացված օբյեկտի նախագծային փաստաթղթերը համաձայնեցնում է համայնքի ղեկավարը (այսուհետ՝ իրավասու մարմին), ընդ որում, նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե պատվիրատուն նախագծային փաստաթղթերի հաստատման վերաբերյալ գրավոր առարկություն չի ներկայացնում իրավասու

մարմին:

(13-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, 29.12.05 N 2406-Ն, փոփ. 09.04.09 N 368-Ն, 03.03.11 N 257-Ն, խմբ. 07.06.12 N 736-Ն)

13¹. *(13¹ կետն ուժը կորցրել է 09.04.09 N 368-Ն)*

13². Իրավասու մարմինը մինչև համաձայնեցումը նախագծի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N 660 որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով իրազեկում է հասարակայնությանը:

(13² կետը լրաց. 29.12.05 N 2406-Ն, 03.03.11 N 257-Ն, փոփ. 07.06.12 N 736-Ն)

13³. Եթե նախագծվող տարածքի համար առկա է հասարակության իրազեկման ընթացակարգերը սահմանված կարգով անցած և հաստատված գոտևորման նախագիծ, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար հասարակության լրացուցիչ իրազեկում չի պահանջվում գոտևորման նախագծից շեղումներ չպարունակելու պայմանով:

(13³ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն, 06.10.11 N 1541-Ն)

13⁴. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող և բնապահպանական փորձաքննության ենթակա քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի մասին հասարակայնությունն իրազեկվում է բնապահպանական փորձաքննության անցկացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

(13⁴ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

13⁵. Բոլոր դեպքերում կառուցապատողը պարտավոր է մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:

(13⁵ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

14. Սույն կարգի 13.3-րդ կետով սահմանված դեպքերում նախագծային փաստաթղթերը պետք է համաձայնեցվեն (ներառյալ սույն կարգի 15.1-ին կետի պահանջներով՝ շինարարության թույլտվության տրամադրումը) դրանք ներկայացվելու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:

(14-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, 03.03.11 N 257-Ն)

14¹. Սույն կարգի 13.3-րդ կետով չնախատեսված դեպքերում նախագծային փաստաթղթերի համաձայնեցման (ներառյալ՝ շինարարության թույլտվության տրամադրման) համար սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետները հաշվարկվում են քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման և ցուցադրման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված 15-օրյա ժամկետի հաշվառմամբ:

(14¹ կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

14². Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են (ներառյալ շինարարության թույլտվության տրամադրումը), այդ թվում՝ էլեկտրոնային համակարգի միջոցով, դրանք կրկին ներկայացվելու օրվանից՝

1) սույն կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված օբյեկտների մասով՝ եռօրյա

ժամկետում.

2) սույն կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օբյեկտների մասով՝ 7-օրյա ժամկետում:

(14 կետը լրաց. 03.03.11 N 257-Ն, 07.06.12 N 736-Ն)

14. Էլեկտրոնային համակարգի միջոցով իրավասու մարմնի կողմից նախագծային փաստաթղթերը վերադարձվելու մասին պատվիրատուն տեղեկացվում է այն էլեկտրոնային հասցեով և հեռախոսահամարով, որը նշված է դիմումում:

(14 կետը լրաց. 07.06.12 N 736-Ն)

15. Համաձայնեցված նախագծային փաստաթղթերը հաստատում է պատվիրատուն: Այն հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշմամբ սահմանված կարգով շինարարության թույլտվություն ստանալու համար:

(15-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, փոփ. 29.12.05 N 2406-Ն)

15. Շինարարության թույլտվությունը (այդ թվում՝ էլեկտրոնային համակարգի միջոցով) տրվում է տվյալ օբյեկտի նախագծային փաստաթղթերի համաձայնեցման հետ միաժամանակ, սույն կարգի 12.1-ին կետով նշված դիմումի հիման վրա, ընդ որում, սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերը համարվում են հաստատված, եթե պատվիրատուն նախագծային փաստաթղթերը համաձայնեցման ներկայացնելիս, վերջիններիս հաստատման վերաբերյալ սույն կարգի 15-րդ կետում նշված որոշմամբ սահմանված կարգով գրավոր առարկություն չի ներկայացնում իրավասու մարմնին:

(15 կետը լրաց. 29.12.05 N 2406-Ն, լրաց., փոփ. 07.06.12 N 736-Ն)

16. *(16-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն, ուժը կորցրել է 29.12.05 N 2406-Ն)*

16. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:

(16 կետը լրաց. 03.03.11 N 257-Ն)

17. Հաստատված նախագծային փաստաթղթերում փոփոխություններ կատարվում են սույն կարգով նախատեսված ընթացակարգերին համապատասխան:

(17-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

18. Նախագծային փաստաթղթերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման և հաստատման ժամանակ ծագող վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:

(18-րդ կետը խմբ. 08.08.03 N 996-Ն)

(Կարգը լրաց. 21.10.99 N 644, փոփ., լրաց., խմբ., 16.12.00 N 826, խմբ. 19.09.01 N 882, 02.02.02 N 97, 08.08.03 N 996-Ն, լրաց., խմբ., փոփ. 07.06.12 N 736-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 21-ի N 812 որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՏՈՒԿ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՍԵՅՍՄԻԿ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ) ՕԲՅԵԿՏՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության տարածքում հատուկ օբյեկտներ են համարվում՝
1) հատուկ նպատակային նշանակության հողերում իրականացվող օբյեկտները՝
ա. Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի, դրանց կազմավորումների և մարմինների, պաշտպանական, ռազմական ենթակառուցվածքի տարածքներում, այդ թվում՝ զինվորական բնակավայրերում իրականացվող բնակելի, հասարակական, արտադրական, ինչպես նաև այլ նշանակության շենքերը և շինությունները,
բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ամրագրված՝ սահմանային գոտում իրականացվող շենքերը և շինությունները, օրենքով պաշտպանվող շենքերը և շինությունները,
2) բնության հատուկ պահպանվող տարածքներում իրականացվող շենքերը և շինությունները.

3) պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված օբյեկտների).

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 1008-Ն որոշման 1-ին կետով սահմանված օբյեկտները:

(Հավելվածը լրաց. 29.12.05 N 2406-Ն, 03.03.11 N 257-Ն, խմբ. 06.10.11 N 1541-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 1998 թվականի
դեկտեմբերի 21-ի N 812 որոշման

Ց Ա Ն Կ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ՝ ԿԱՐԵՎՈՐ) ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ
ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

1. Հայաստանի Հանրապետության տարածքում կարևորագույն նշանակության օբյեկտներ են համարվում՝

- 1) հասարակական շենքեր և շինություններ՝
 - ա. դպրոցներ (կրտսեր, միջնակարգ և ավագ), արտադպրոցական կազմակերպություններ, հատուկ դպրոցներ, նախադպրոցական կազմակերպություններ,
 - բ. երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, տարեցների և հաշմանդամների տուն-ինտերնատներ,
 - գ. պոլիկլինիկաներ, առողջության պահպանման կենտրոններ, ամբուլատորիաներ, հիվանդանոցներ, ծննդատներ, հոսպիսներ,
 - դ. միջնակարգ մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատություններ,
 - ե. գիտական, գիտահետազոտական, նախագծային կազմակերպություններ, բանկեր, գրասենյակներ և այլ վարչական օբյեկտներ՝ 200 և ավելի աշխատատեղով,
 - զ. ռեստորաններ, սրճարաններ և հանրային սննդի այլ օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,

է. հյուրանոցային տնտեսության օբյեկտներ՝ 200 և ավելի տեղով,
ը. մշակույթի կենտրոններ, թատրոններ, կրկեսներ, կինոթատրոններ, համերգասրահներ՝
դահլիճի 300 և ավելի նստատեղով,
թ. բենզալցակայաններ, գազալցակայաններ,
ժ. առևտրի կենտրոններ, հանրախանութներ և տոնավաճառներ՝ 1500 քառ. մետր և ավելի
ընդհանուր մակերեսով,
ժա. զվարճությունների և հանգստի կազմակերպման կենտրոններ (հրաձգարաններ,
բիլիարդի, բոուլինգի, սեղանի թենիսի և համանման խաղերի կազմակերպման համար
նախատեսված օբյեկտներ) և խաղատներ՝ 100 և ավելի այցելուի համար,
ժբ. թանգարաններ, պատկերասրահներ, ցուցասրահներ՝ 1500 քառ. մետր և ավելի
ընդհանուր մակերեսով,
ժգ. դատարաններ՝ 4 և ավելի դատավորներով,
ժդ. ունիվերսալ փակ մարզադահլիճներ՝ 1500 և ավելի նստատեղով, լողավազաններ՝
ավազանի ջրի հայելու 25.0 x 50.0 մետր և ավելի չափերով,
ժե. գրադարաններ, արխիվներ, ավանդապահոցներ՝ 1 մլն և ավելի միավորով,
ժզ. ավտոկայաններ՝ 50000 և ավելի բնակիչ ունեցող քաղաքների համար,
ժէ. բազմահարկ վերգետնյա ավտոկանգառներ՝ 100 և ավելի ավտոմեքենայի համար,
ստորգետնյա ավտոկանգառներ՝ 50 և ավելի ավտոմեքենայի համար,
ժը. դիվանագիտական ներկայացուցչություններ,
ժթ. երկաթուղային կայարաններ՝ 3 և ավելի կառամատույցներով,
ի. օդանավակայաններ,
իա. մետրոպոլիտեն,
իբ. հեռուստառադիոկենտրոններ, հեռուստաաշտարակներ,
իգ. քաղաքաշինական համալիրներ, որոնք իրենց կազմում ունեն սույն ցանկում ընդգրկված
օբյեկտները.

2) բազմաբնակարան բնակելի և բազմաֆունկցիոնալ շենքեր, ինչպես նաև քաղաքաշինական
համալիրներ կամ թաղամասեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ
սահմանված՝ շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող
գործունեությունների սահմանային չափերը գերազանցող կառուցապատման մակերեսով.

3) 10 և ավելի հարկայնության կամ 28 մետր բարձրությունը գերազանցող օբյեկտներ.

4) արդյունաբերական, ընդերքօգտագործման, գյուղատնտեսական և այլ արտադրական
նշանակության, հիդրոտեխնիկական, կոմունալ, պահեստային, էներգետիկայի, կապի,
ինժեներական և տրանսպորտային ենթակառուցվածքների օբյեկտներ՝

ա. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի
մարտի 30-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող
գործունեությունների սահմանային չափերի մասին» N 193 որոշմամբ սահմանված օբյեկտները,

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի
«Հիդրոտեխնիկական կառուցվածքների անվտանգության հիմնական ցուցանիշները
հաստատելու մասին և պետական հատուկ նշանակության հիդրոհանգույցների ցանկը
սահմանելու մասին» N 1862-Ն որոշման N 2 հավելվածով և Հայաստանի Հանրապետության
կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի «Հիդրոտեխնիկական կառուցվածքների
անվտանգության հայտարարագրի բովանդակությունը, դրա մշակման և փորձաքննության
իրականացման կարգը սահմանելու մասին» N 957-Ն որոշմամբ սահմանված օբյեկտները,

գ. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օբյեկտները,

դ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի ապրիլի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների կողմից պետական պահպանության ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների շենքերի ու շինությունների, ինչպես նաև կարևորագույն նշանակության օբյեկտների ցանկերը հաստատելու մասին» N 1008-Ն որոշման 2-րդ կետով սահմանված օբյեկտները,

ե. «Շրջակա միջավայրի առնչությամբ տեղեկության, որոշումներ ընդունելուն հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի N 1 հավելվածով սահմանված օբյեկտները:

(Հավելվածը լրաց. 29.12.05 N 2406-Ն, խմբ. 06.10.11 N 1541-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան
Ձև N 1

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Դ Ր Ա Ն Ք

Բնակելի, հասարակական նշանակության շենքերի ու շինությունների

Օբյեկտ _____
(կառուցվող, վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող)

_____ օբյեկտի անվանումը և տեղադրման վայրը)
_____ նախագծային փաստաթղթերի մշակման

Նախագծման հիմքը _____
(Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած

_____ կարգով տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը)

Նախագծման փուլերը _____
(համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ նախագծային

_____ կապալի պայմանագրի)
Տարբերակային մշակման պահանջները _____
(համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի

_____ կամ նախագծային կապալի պայմանագրի)
Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները _____

_____ (բնակելի կամ հասարակական
_____ շենքերի (մասնաշենքերի) տարողունակությունը, բնակարանների քանակը,

_____ այլ անհրաժեշտ ցուցանիշներ)
Առաջարկվող բնակարանների տիպերը և
դրանց հարաբերակցությունը _____
(բնակելի նշանակության շենքերի դեպքում)

Ճարտարապետահատակագծային լուծումներին
ներկայացվող լրացուցիչ պահանջներ _____

Ինժեներական և տեխնոլոգիական սարքավորմանը
ներկայացվող լրացուցիչ պահանջներ _____

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի
հասանելիության ապահովման լրացուցիչ միջոցառումներ _____

Ցուցադրական նյութերի կազմին և մասշտաբին
ներկայացվող լրացուցիչ պահանջներ _____

Բարեկարգման, փոքր ճարտարապետական ձևերի և
կանաչապատման վերաբերյալ լրացուցիչ պահանջներ _____

Ինտերիերների մշակման վերաբերյալ պայմաններ _____
(համաձայն նախագծային կապալի պայմանագրի)

Այլ պայմաններ _____

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ _____
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ. Տ.

(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ)

(Ձև N1 լրաց. 29.12.05 N 2406-Ն)

_____ 200 թ.

Ձև N2

Ն Ա Խ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Դ Բ Ա Ն Ք

Արտադրական նշանակության օբյեկտների

Օբյեկտ _____
(կառուցվող, վերակառուցվող, ուժեղացվող, վերականգնվող

_____ օբյեկտի անվանումը և տեղադրման վայրը)

_____ նախագծային փաստաթղթերի մշակման

Նախագծման հիմքը _____
(Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած

կարգով տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը)
Նախագծման փուլերը _____
(համաձայն ճարտարապետահատակագծային առաջադրանքի կամ

նախագծային կապալի պայմանագրի)
Տարբերակային մշակման պահանջներ _____
(համաձայն ճարտարապետահատակագծային

առաջադրանքի կամ նախագծային կապալի պայմանագրի)

Հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշները _____
(շենքերի (մասնաշենքերի)

տարողունակությունը, հզորությունը, արտադրողականությունը, այլ անհրաժեշտ ցուցանիշներ)

Արտադրության կազմակերպմանը և տեխնոլոգիային
վերաբերող լրացուցիչ պահանջներ _____

Թողարկային համալիրների և հերթականության, ընկերության
հեռանկարային ընդլայնման ապահովման վերաբերյալ պահանջներ _____

Անվտանգության տեխնիկայի և աշխատանքի հիգիենայի
վերաբերյալ լրացուցիչ պահանջներ _____

Քաղաքացիական պաշտպանությանը և արտակարգ իրավիճակների
կանխարգելմանն ուղղված ինժեներատեխնիկական
միջոցառումների վերաբերյալ լրացուցիչ պահանջներ _____

Փորձարարակոնստրուկտորական և գիտահետազոտական աշխատանքների
կազմակերպման վերաբերյալ լրացուցիչ պահանջներ _____

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի
հասանելիության ապահովման լրացուցիչ միջոցառումներ _____

Ցուցադրական նյութերի կազմին և մասշտաբին
ներկայացվող լրացուցիչ պահանջներ _____

Բարեկարգման, փոքր ճարտարապետական ձևերի և
կանաչապատման վերաբերյալ լրացուցիչ պահանջներ _____

Ինտերիերների մշակման վերաբերյալ պայմաններ _____
(համաձայն նախագծային կապալի պայմանագրի)

Այլ պայմաններ _____

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ _____
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Վ. Տ.

(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻ)

(Ձև N2 լրաց. 29.12.05 N 2406-Ն)

_____ 200 թ.